ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-20/2» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2017թ-ի մայիսի 17-ին կնքված N ՇՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի հոկտեմբերի 31-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են պայմանագրի գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ՇՀԱՊՁԲ-20/2-1 գնման պայմանագր գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը 2017թ. նոյեմբերի 1-ից տեղափոխել մինչև 2017թ. դեկտեմբերի 1-ը: Վճարման ժամանակացույցը թողնել անփոփոխ:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 9.4 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի պետ Ա. Գրիգորյան:

Հեռախոս՝ 010-29-44-18:

Էլ. փոստ՝ a.grigoryan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՇՀԱՊՁԲ-20/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **31-ը հոկտեմբերի 2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Պապ և Թոռ Գրիգորյաններ" ՍՊԸ -ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 17.05.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-20/2-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.4 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ՇՀԱՊՁԲ-20/2-1 գնման պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը 2017թ. նոյեմբերի 1-ից տեղափոխել մինչև 2017թ. դեկտեմբերի 1-ը: Վճարման ժամանակացույցը թողնել անփոփոխ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	"Պապ և Թոռ Գրիգորյաններ" ՍՊԸ ք. Մասիս, Նոր Թաղամաս, 32/16 բն. 38 "Արդշինբանկ" ՓԲԸ, Մասիս մ/ճ Հ/Հ 2472900259460010 ՀՎՀՀ 03809214 տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ/Հ 00573205Հ